



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» ապրիլի

2021 թվականի N 117-Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 95-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 95-Լ որոշման հավելվածը (այսուհետ՝ Հավելված) 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ կետով՝

«3.1. Հաշվեքննիչ պալատի անդամներն աշխատակիցների հետ հաղորդակցության ընթացքում պետք է խթանեն էթիկական միջավայրի ստեղծումը և էթիկական արժեքների տարածումը, այդ թվում՝ ընդգծելով հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների ընթացքում կիրառվող էթիկայի կանոնների կարևորությունը և բացատրելով այդ կանոնները աշխատակիցներին, հաշվի առնելով էթիկայի կանոնների պահպանումն աշխատակիցների կատարողականը գնահատելիս և խրախուսումներ տրամադրելիս, մասնագիտական շարունակական զարգացումն ապահովելիս, ներդնելով մոնիթորինգային հսկողության մեխանիզմներ՝ էթիկական ռիսկերը զսպելու համար, որոշակի պարբերականությամբ գնահատելով և վերանայելով էթիկայի կանոնները:»:

2. Հավելվածի 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ կետով՝

«7.1. Հաշվեքննիչ պալատի անդամն իրավունք չունի իր ծառայողական դիրքը կամ Հաշվեքննիչ պալատի անունն օգտագործել ոչ ծառայողական նպատակներով:»:

3. Հավելվածի 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-րդ և 20.2-րդ կետերով՝

«20.1. Եթե հաշվեքննության իրականացման ընթացքում ի հայտ է(են) գալիս Հաշվեքննիչ պալատի անդամի անկախության կամ օբյեկտիվության ապահովումը վտանգող գործոն(ներ), ապա Հաշվեքննիչ պալատի տվյալ անդամը պարտավոր է այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Հաշվեքննիչ պալատին:

20.2. Հաշվեքննիչ պալատի այն անդամը, որի օբյեկտիվության կամ անկախության ապահովումը հաշվեքննության ընթացքում հնարավոր չէ երաշխավորել կամ վերացնել դրանց սպառնացող վտանգ(ներ)ը՝ չի կարող համակարգել տվյալ հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները»:

4. Հավելվածի 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1-րդ կետով՝

«22.1. Հաշվեքննիչ պալատի անդամն իր գործունեությունն իրականացնելիս պետք է հետևի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված որակավորման, վերապատրաստման և շարունակական մասնագիտական զարգացման պահանջներին:»:

5. Հավելվածի Ձև 1-ի 3-րդ կետը «հետ» բառից հետո լրացնել «հաշվեքննության մեկնարկին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում և (կամ) հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում» բառերով:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ



Լ. ՅՈԼՅԱՆ